Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՀԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼԼԸՆՃՅԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅԱԿՈԲ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԼԼԸՆՃԵԱՆ, ՈՐ Ի ՄՕՆԹԷՎԻՏԷՕ, ՈՒՐՈՒԳՈՒԱՅ

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ Ուրուգուայի հայոց թեմի Կենտրոնական Վարչութեան եւ հաւատաւոր հայորդեաց կողմից կազմակերպուում է հանդիսութիւն՝ Ձեր քահանայական ձեռնադրութեան 30-րդ տարեդարձի կապակցութեամբ: Բերկրալի այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները:

Սիրելի Սրբազան,

Մեր Եկեղեցու լուսաւոր անդաստանում քահանայագործութեան Ձեր առաջին քայլերը կատարելու տարիներից Մենք ճանաչեցինք Ձեզ, երբ, իբրեւ Մայր Աթոռիս երիտասարդ միաբան, հոգեւոր ուսումնառութիւնը շարունակելու նպատակով ժամանեցիք Գերմանիա, հետագային լծուելով նաեւ հովուական սպասաւորութեան: Այդ օրերից ի վեր Մենք Ձեր մէջ տեսանք նուիրեալ ու նախանձախնդիր եկեղեցականի, ով անսալով Բարձրեալի կանչին, իր կեանքը դարձրել է առաքելութիւն՝ ի սպասաւորութիւն հաւատաւոր մեր ժողովրդի:

Ձեր ջանքերը առաւելաբար արդիւնաւորուել են Ուրուգուայի հայոց թեմում, ուր պաշտօնավարում էք աւելի քան երկու տասնամեակ՝ Աստուծոյ Խօսքը մատուցելով հեռաւոր երկրում կայք հաստատած մերազն զաւակներին: 2003 թուականին Լատինական Ամերիկայի երկրներ կատարած Հովուապետական Մեր այցելութեան ընթացքին Մենք ականատես եղանք Ուրուգուահայ համայնքի ազգային եւ եկեղեցական կեանքից ներս արձանագրուած յաջողութիւններին, ինչպէս եւ առկայ դժուարութիւններին: Մեզ համար գոհունակութիւն է, որ Ձեզ յատուկ խոհեմութեամբ ու հմտութեամբ ղեկավարում էք Տիրախնամ թեմը, եւ Ուրուգուայի փոքրաթիւ զաղութը շարունակում է Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ մշտավառ պահել ազգային եւ հոգեւոր կեանքի ջահը:

Սիրելի Սրբազան, արդիւնաշատ ու գնահատելի է նաեւ Ձեր ստեղծագործական գործունէութիւնը: Ձեր աշխատութիւնների միջոցով մեր անցեալը եւ հայ հոգեւոր մշակոյթը ճանաչելի էք դարձնում մեր ժողովրդի զաւակներին՝ զօրացնելով նրանց հոգեւոր, ազգային ու հայրենասիրական զգացումները:

Ձեր քահանայագործութեան երեսնամեայ յոբելեանի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր սէրն ու գնահատանքը՝ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալի խնամքը հայցելով Ձեզ եւ հովանին Ձեր եկեղեցաշէն գործունէութեանը:

Թող Բարին Աստուած անսասան ու անխոռով պահի Ուրուգուայի հայոց թեմը եւ ամենակեցոյց Իր շնորհներով առատապէս օրհնի Իր Սուրբ Անուանը միշտ հաւատարիմ մեր ժողովրդի զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 13-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2006 եւ ի թուին հայոց ՌՆԾԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 705